ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՍԱՐՄ-ԳՀԱՊՁԲ-19/4 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «14» հոկտեմբերի 2019թ.

2019թ-ի հոկտեմբերի 04-14-ը, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գրասենյակում՝ ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում, տեղի ունեցավ **ՍԱՐՄ-ԳՀԱՊՁԲ-19/4** ծածկագրով /քիմիական նյութեր/ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Նարինե Ջիլավյան		«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ կազմակերպատնտեսական բաժնի պետ.
Արտակ	Շահբազյան	«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ տնօրենի տեղակալ՝ անդամ.
Մարետա	Խաչատրյան	«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ գլխավոր հաշվապահ ՝ անդամ.
Հրաչ	Պողոսյան	«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ Լաբորատորիայի ղեկավար,ԼՓԿ ղեկավար ՝ անդամ.
Արամ	Չուխաջյան	«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ Համակարգչային ցանցի սպասարկման մասնագետ ՝ անդամ.

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

Տիրան	Լաճիկյանը	«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ գնումների մասնագետ:

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ ներկայացուցիչ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի

մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Նարինե Ջիլավյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. **ՍԱՐՄ-ԳՀԱՊՁԲ-19/4** ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հաստատման մասին:
2. **ՍԱՐՄ-ԳՀԱՊՁԲ-19/4** ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1. ՍԱՐՄ-ԳՀԱՊՁԲ-19/4 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ՝ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկուցեց քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ հայտնելով, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է ՍԱՐՄ-ԳՀԱՊՁԲ-19/4 ծածկագրով գնման ընթացակարգի 1-6-րդ, 27-28-րդ, 37-39-րդ, 42-47-րդ, 50-51-րդ, 53-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի ֆինանսական միջոցների հարցման մասին տեղեկատվություն, որը ներկայացվել է հանձնաժողովի անդամներին:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. ՍԱՐՄ-ԳՀԱՊՁԲ-19/4 ծածկագրով գնման ընթացակարգի 1-6-րդ, 27-28-րդ, 37-39-րդ, 42-47-րդ, 50-51-րդ, 53-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի որակավորման չափանիշները բավարարում են հրավերով սահմանված պահանջներին:

Որոշվեց՝

1. Տիրան Լաճիկյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

2. Հաստատել **ՍԱՐՄ-ԳՀԱՊՁԲ-19/4** ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման հետևյալ արդյունքները.

1) «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ՝ բավարար.

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

2. ՍԱՐՄ-ԳՀԱՊՁԲ-19/4 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

1. **ՍԱՐՄ-ԳՀԱՊՁԲ-19/4** ծածկագրով գնման ընթացակարգի 1-6-րդ, 27-28-րդ, 37-39-րդ, 42-47-րդ, 50-51-րդ, 53-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Նարինե Ջիլավյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Արտակ Շահբազյան _____

Մարետա Խաչատրյան _____

Հրաչ Պողոսյան _____

Արամ Չուխաջյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան _____